տեղ· զի զինչ գիրք կամիս՝ գտանես ի սուրբ 245
Երուսաղէմ։ Զայս ամենայն աչօք իմովք տեսի։

Եւ յայսմ ամի[2] փախաւ Հոռմի պատ-
րիարգն վասն պարտուց· զի ասեն թէ ԽՌ զու-
ռուչ պարտք ունի։ Ապա գոհութիւն ու փառք
Աստուծոյ, որ մեք այսպէս չէն եւ հաստատ 250
տեսաք զմեր եկեղեցիքն· զի ժամանակ մի եւ
Հայք այսպէս էին, որպէս յառաջ ասացաք։

Եւ գկնի Պատրիարգին երկրպագեալ ամե-
նեքեանքն՝ դարձաք ի սուրբ Յակոբ։ Եւ որ-
չափ մարդ կայր՝ զամէնն նա կերակրեաց այն 255
օրն՝ Պարնոտէրն· զի էին աւելի քան զհազար
հոգի· ի վերայ տանեաց նոտան եւ սուրբ Յա-
կոբայ էրդիքն· կերաք դառն, հէրիսայ եւ խո-
րու· եւ խմեցաք զանուշ գինին։

ԳՈՎԵՍՏ Ս· ՏԵՂԵԱՑ

Եւ երկուշաբթի մեռելոցին սկսաք պատ-
բաստութիւն ճանապարհին տեսնուլ։ Եւ յոր-
ժամ յիշէաք զերթալն՝ սիրտք մեր ճմլէին
զմեզ, եւ արտասուք աչաց մերոց թորէր, եւ
այնպէս թէ ի ծնողաց բաժանէաք կամ հարսն 5
ի սեսէ· զի քան զամենայն քաղցր եւ ախորժ
սուրբ քաղաքն Երուսաղէմ է· զի մոռացեալ
էաք զամենայն նեղութիւնս, զտուն եւ զտեղս
մեր· եւ զժար թուէր բաժանիլ մեր յաստուա-
ծակոխ տեղեացն այն։ Եւ այնչափ տնօրինա- 10

247 այսմ, պատրիարգն։
5 ի չիք։

---

[2] 1617։